ՆԱԽԱԳԻԾ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«28» նոյեմբերի 2014թ. N 809-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 23-Ի N 283 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Գյուղատնտեսական տեխնիկայի շահագործման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի դրույթներին, «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 23-ի «Գյուղատնտեսական տեխնիկայի պետական հաշվառման կարգը հաստատելու մասին» N 283 որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունը՝

1) վերնագրում և 1-ին կետում «տեխնիկայի» բառից հետո լրացնել «և տրակտորային կցանքների» բառերը.
2) հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության կառավարության
2014 թվականի նոյեմբերի 28-ի
N 809-Ն որոշման

«Հավելված
Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության կառավարության
2006 թվականի մայիսի 23-ի
N 283 որոշման

Կ Ա Ր Գ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԵՎ ՏՐԱԿՏՈՐԱՅԻՆ ԿՑԱՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՇԱՌՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում շահագործվող գյուղատնտեսական տեխնիկայի և տրակտորային կցանքների պետական հաշվառման (այսուհետ՝ հաշվառում) գործընթացը:

2. Սույն կարգի նպատակն է կանոնակարգել Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ֆիզիկական և իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող և շահագործվող գյուղատնտեսական տեխնիկայի և տրակտորային կցանքների հաշվառումը:

II. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԵՎ ՏՐԱԿՏՈՐԱՅԻՆ ԿՑԱՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

3. Գյուղատնտեսական տեխնիկան և տրակտորային կցանքները հաշվառման են վերցվում գյուղատնտեսական տեխնիկայի պետական տեսչության կողմից:

4. Գյուղատնտեսական տեխնիկայի և տրակտորային կցանքների հաշվառման համար սեփականատերը գյուղատնտեսական տեխնիկայի պետական տեսուչին ներկայացնում է օրենքով սահմանված հետևյալ փաստաթղթերը՝

1) դիմում.

2) գյուղատնտեսական տեխնիկայի կամ տրակտորային կցանքների սեփականության իրավունքը հավաստող փաստաթուղթ.

3) ինքնաշեն գյուղատնտեսական տեխնիկայի հաշվառման դեպքում հիմնական հանգույցների (շարժիչի, ամրաշրջանակի), իսկ տրակտորային կցանքների ամրաշրջանակի ձեռքբերման օրինականությունը հավաստող փաստաթղթեր:

Սույն կետի 2-րդ և 3-րդ ենթակետերում նշված փաստաթղթերն են՝ գյուղատնտեսական տեխնիկայի կամ տրակտորային կցանքների նկատմամբ իրավունքների ծագման, փոփոխման կամ դադարեցման վերաբերյալ սահմանված կարգով կնքված պայմանագրերը, հաշիվ-ապրանքագրերը, ապրանքային կամ դրամարկղային չեկերը, նոտարի կողմից տրված ակտերը և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված իրավունքը հաստատող այլ փաստաթղթեր.

4) գյուղատնտեսական տեխնիկայի կամ տրակտորային կցանքների հաշվառման համար օրենքով նախատեսված պետական տուրքերի վճարման անդորրագրերը.

5) ֆիզիկական անձը՝ անձը հաստատող փաստաթուղթ, իսկ իրավաբանական անձը՝ պետական գրանցման վկայական:

5. Գյուղատնտեսական տեխնիկայի պետական տեսուչը՝

1) զննում է գյուղատնտեսական տեխնիկայի պետական տեսչության կողմից գյուղատնտեսական տեխնիկայի տեխնիկական վկայագրում կամ տրակտորային կցանքների տեխնիկական կտրոնում, իսկ տեխնիկական վկայագիրը կամ տեխնիկական կտրոնը տրված չլինելու դեպքում՝ սույն կարգի 4-րդ կետի 2-րդ կամ 3-րդ ենթակետերով նախատեսված փաստաթղթերում նշված տվյալների համապատասխանությունը փաստացի վիճակին.

2) փաստաթղթերով ներկայացված և զննման արդյունքներով արձանագրված տեխնիկական տվյալների համապատասխանության դեպքում երեք աշխատանքային օրվա ընթացքում կատարում է հաշվառում, սեփականատիրոջը տալիս է պետական համարանիշ, ստորագրված և կնքված տեխնիկական վկայագիր, իսկ տրակտորային կցանքների համար պետական համարանիշ և կնքված տեխնիկական կտրոն.

3) տեխնիկայի հաշվառման պահանջներին անհամապատասխանության դեպքում եռօրյա ժամկետում սեփականատիրոջը գրավոր տեղեկացնում է մերժման մասին՝ նշելով դիմումում նշված տվյալներում և ներկայացված փաստաթղթերում հաշվառման ներկայացված տեխնիկայի զննման գործընթացում հայտնաբերված թերությունները.

4) սեփականատիրոջ, գյուղատնտեսական տեխնիկայի, ինչպես նաև հատկացված տեխնիկական վկայագրի և պետական համարանիշի, ինչպես նաև տրակտորային կցանքների համար պետական համարանիշի և կնքված տեխնիկական կտրոնի տվյալները գրառում է հաշվառման գրքում՝ համաձայն ձևի:

6. Գյուղատնտեսական տեխնիկայի կամ տրակտորային կցանքների հաշվառման մերժման դեպքում սեփականատերն իրավունք ունի բողոքարկելու պետական տեսուչի գործողությունը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. Գյուղատնտեսական տեխնիկան կամ տրակտորային կցանքները հաշվառումից հանվում են օրենքով սահմանված դեպքերում:

8. Սեփականատերը գյուղատնտեսական տեխնիկան կամ տրակտորային կցանքները հաշվառումից հանելու համար տեսուչին ներկայացնում է՝

1) սահմանված ձևի դիմում.

2) հաշվառումից հանելու համար սահմանված պետական տուրքի մուծման անդորրագիր.

3) տեխնիկական վկայագիր և պետական համարանիշ, իսկ տրակտորային կցանքների համար պետական համարանիշ և տեխնիկական կտրոն:

9. Սեփականատերը գյուղատնտեսական տեխնիկայի տեխնիկական վկայագրի կամ պետական համարանիշի, ինչպես նաև տրակտորային կցանքների համար պետական համարանիշի և տեխնիկական կտրոնի կորստի դեպքում նորը (կրկնօրինակը) տրամադրելու համար տեսուչին ներկայացնում է՝

1) դիմում.

2) տեխնիկական վկայագրի կամ պետական համարանիշի, ինչպես նաև տրակտորային կցանքների համար պետական համարանիշի կամ տեխնիկական կտրոնի կորստի վերաբերյալ հայտարարություն՝ առավելագույն տպաքանակ ունեցող մամուլում.

3) տեխնիկական վկայագրի կամ պետական համարանիշի, ինչպես նաև տրակտորային կցանքների համար պետական համարանիշի նորը հատկացնելու համար սահմանված պետական տուրքի մուծման անդորրագիր:

10. Տեսուչը տեխնիկան հաշվառելու և հաշվառումից հանելու մասին տեխնիկական

վկայագրի, իսկ տրակտորային կցանքների համար տեխնիկական կտրոնի համապատասխան բաժնում կատարում է գրառում, որը ստորագրում և կնքում է տեսչության կնիքով։»:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Լ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՇՎԱՌՄԱՆ ԳԻՐՔ

NN ը/կ	Գյուղատնտեսական տեխնիկայի կամ տրակտորային կցանքների անվանումը	Գյուղատնտեսական տեխնիկայի կամ տրակտորային կցանքների տվյալները				Մեփականատիրոջ տվյալները		Տրվել է տեխնիկական վկայագիր կամ տեխնիկական կտրոն		Տրվել է պետական համարանիշ		Ծանոթագրություն
		մակնիշը	թողարկման տարեթիվը	գործարանային համարը	շարժիչի համարը	անունը, ազգանունը, իրավաբանական անձի անվանումը	ֆիզիկական անձի բնակության վայրը, իրավաբանական անձի գտնվելու վայրը	սերիան և համարը	ստացող ստորագրությունը	սերիան և համարը	ստացող ստորագրությունը	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Լ.ԳՐԻԳՈՐՅԱՆ